325
XII

# ՀԱՇԻՒ

## ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## 1904 Թ.

ՔՍԱՆՈՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻԶ
Էլէկտրաշարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկերութեան
1905

13537

Дозволено цензурою. Тифлисъ, 16-го марта 1905 г.

Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն տ.տ. անդամուհիների, որ ընդհանուր ժողով է նշանակել մարտի 27-ին, ժամը 12-ին, կարուձևի գործանոցում (Գանովսկի փողոց տ. № 25) և յատուկ խնդրում է Ձեզ շնորհ բերել ընդհանուր ժողովին, որովհետև կարուձևի գործանոցի համար գետին գնելու և շինութիւն կառուցանելու հարցը պէտք է քննուի, որի համար անհրաժեշտ է ընկերութեան բոլոր անդամուհիների $^{1}/_{2}$-ը:

---

Նոյն օրը, առաւօտեան ժամը 10-ին լինելու է նաև ձեռագործի վաճառք:

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ընկերութեան պատուաւոր անդամներ՝ պ. Ա. Քիշմիշեանց
տ. Վ. Ռոտինեան
տ. Մ. Խատիսեան

2247

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ատենապետուհի՝ տ. Վ. Ռոտինեան
Փոխ-Ատենապետուհի՝ տ. Հայկանոյշ Մարտիրոսեան

### Անդամներ

տ. Մ. Ցուրինեան
տ. Ն. Ղամբարեան
տ. Մ. Մելիք-Կարագէօզեան (քարտուղար)
տ. Ա. Ռոտինեան
տ. Մ. Խատիսեան
տ. Ա. Լալայեան
տ. Վ. Միլեան (գանձապահ)

օր. Ե. Մելիք-Հայկազեան
տ. Ե. Լիսիցեան
տ. Ե. Առաքելեան

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ

տ. Հ. Աւթանդիլեան
տ. Ս. Բարխուդարեան
տ. Ս. Աբրահամեան

### Թեկնածուներ

Իշ. Գ. Բէհբութեան
տ. Ս. Քալանթարեան

### Թեկնածուներ

տ. Մ. Միրիմանեան
տ. Գի. Բաբանասեան

## ՄԻԱՆՈՒԱԳ ՎՃԱՐՈՂ ԳՈՐԾԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

տ. Ալիբէկեան Նունէ
տ. Ալիխանեան Նադեժդա
տ. Աղաբէկեան Մարիամ
իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Մարիամ
իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Մարիամ
տ. Ադելխանեան Հեղինէ
տ. Աւթանդիլեան Հեղինէ
օր. Աւթանդիլեան Եղիսաբէթ
տ. Բաբայեան Սոֆիա
տ. Բաբայեան Վարվառէ
իշ. Բէհբութեան Կատարինէ
իշ. Բէհբութեան Վարվառէ
† իշ. Բէկթաբէկեան Մարիամ
† Դոլուխանեան Կատարինէ
տ. Եւանդուլեան Վարվառէ
տ. Եարալեան Կատարինէ
տ. Էմինեան Աննա
տ. Թայիրեան Եղիսաբէթ
տ. Լալայեան Շուշանիկ
տ. Խատիսեան Մարիամ
տ. Ծովիանեան Մարիամ
տ. Ղամբարեան Նունէ
տ. Մանթաշեան Դարիա
տ. Մարկոսեան Կատարինէ
տ. Մարտիրոսեան Հայկանոյշ
տ. Մարտիրոսեան Մարիամ
տ. Մեհրաբեան Կատարինէ
տ. Միլեան Վարվառէ
տ. Մութաֆեան Շողակաթ
տ. Յակոբեան Կատարինէ
տ. Նադիրեան Կատարինէ
տ. Նունուֆարեան Նատալիա
տ. Շադինեան Քալի
տ. Չիթախեան Սոֆիա
տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Աննա
տ. Ռոտինեան Վարվառէ
տ. Սաֆարեան Նատալիա
տ. Վարդանեան Աննա
տ. Վարդանեան Նունէ
տ. Տէր-Յակոբեան Եւգինէ
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սոֆիա

## ԳՈՐԾԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

### Ա

իշ. Աբամելիքեան Դարիա
տ. Աբեսալոմեան Նունէ
տ. Աբրահամեան Սոֆիա
տ. Աբովեան Նոյեմզար
տ. Աւետիսեան Ոսկի
տ. Ալիխանեան Վարվառէ
տ. Ալիբէկեան Կատարինէ
տ. Ամբարդանեան Վարվառէ
տ. Ամբարդանեան Թամար
10 օր. Աբիեան Մարգարիտ



տ. Աղայեան Նատալիա (Նոր անդ.)
տ. Ալէլեան Վարվառէ
տ. Աննանեան Մարիամ
տ. Աննանեան Օլգա
տ. Ազիզեան Մարիամ (Նոր անդ.)
իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Նադեժդա (Նոր անդ.)
տ. Առաքելեան Եղիսաբէթ
տ. Արզումանեան Փառանձեմ
տ. Աստուածեան Հեղինէ (Նոր անդ.)

### Բ

20. տ. Բաբանասեան Թամար
տ. Բաբանեան Նատալիա
տ. Բայտողեան Շուշանիկ
տ. Բարխուդարեան Վարդուհի
տ. Բարխուդարեան Եղիսաբէթ
տ. Բարխուդարեան Սաթինիկ
իշ. Բէհբութեան իշ. Սոֆիա
իշ. Բէհբութեան իշ. Մարիամ
իշ. Բէկթաբէկեան Եղիսաբէթ
իշ. Բէկթաբէկեան Աննա
30. տ. Բերէիս Մարիամ
օր. Բոզարջեան Մարիամ

### Գ

տ. Գէորգեան Եղիսաբէթ
տ. Գէորգեան Սոֆիա
տ. Գիրգիզեան Եղիսաբէթ
օր. Գոզալեան Օլգա (Նոր անդամ)
տ. Գոզալեան Եղիսաբէթ (Նոր անդ.)
տ. Գասպարեան Սարրա

### Դ

տ. Դաւթեան Մարիամ
տ. Դաւթեան Քալի
40. օր. Դոլուխանեան Օլգա
տ. Դոլուխանեան Նունէ

### Ե

տ. Եակուլեան Նատալիա
տ. Եարալեան Հռիփսիմէ (Նոր անդ.)
տ. Երզնկեան Սերաֆիմա
տ. Երիցեան (Նոր անդ.)
տ. Երէցփոխեան Սոֆիա

### Զ

տ. Զարգարեան Նունէ
տ. Զաւրեան Դարիա (Նոր անդ.)
տ. Զուբալեան Նատալիա (Նոր անդ.)

### Է

50. տ. Էրիստովա Կատարինէ
տ. Էնիկոլոփեան Եղիսաբէթ
տ. Էնիկոլոփեան Նատալիա

### Թ

տ. Թամիրեան Մարիամ (Նոր անդ.)
տ. Թադէոսեան Վար. (Նոր անդ.)
տ. Թադէոսեան Ռոզալիա
իշ. Թումանեան Մարիամ
տ. Թումաս Օսաննա

### Ի

տ. Իզմայիլեան Աննա
տ. Իզմիրեան Սոփիա

### Լ

60 տ. Լիսիցեան Կատարինէ

տ. Լունկևիչ Մարիամ

Խ

տ. Խաչատրեան Նունէ
տ. Խաչատրեան Եղ. (նոր անդ.)
ա. Խարազեան Մարիամ
տ. Խալաթեան Կատարինէ
տ. Խանդամիրեան Նատալիա
օր. Խիզանեան Սոֆիա (նոր անդ.)
տ. Խուդադեան Մարիամ
տ. Խուդավերդեան Սոֆիա

Ծ

70. տ. Ծատուրեան Վարդուհի
տ. Ծովիանեան Լիւբով
տ. Ծուրինեան Ալեքսանդրա
տ. Ծուրինեան Մարգարիտ
տ. Ծուրինեան Հեղինէ

Կ

տ. Կարախանեան Մարիամ
տ. Կիրակոսեան Թամար
տ. Կուզանեան Աննա
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Կուկուջանեան Աննա
80. տ. Կուտոյեան Եղիսաբէթ

Հ

օր. Hambling Ե. Մ. (նոր անդ.)
տ. Հաքիմեան Մարիամ
տ. Հախվերդեան Աննա
տ. Հախվերդեան Մաննա

Ղ

տ. Ղազազեան Սոֆիա
տ. Ղարաջեան Նատալիա
տ. Ղորղանեան Աննա (նոր անդ.)
տ. Ղորղանեան Կատարինէ
տ. Ղորղանեան Եղ. (նոր անդամ)
տ. Ղորղանեան Մարգարիտ
90. տ. Ղորղանեան Նունէ
տ. Ղորղանեան Ֆլօրա
օր. Ղուլիջանեան Կատարինէ
տ. Ղուլիջանեան Մարիամ
տ. Ղլտճեան Սաթինիկ
տ. Ղալազեան Վարվառէ
տ. Ղուլեան Դարիա

Ճ

տ. Ճշմարիտեան Սաթինիկ

Մ

տ. Մայսուրեան Նատալիա
տ. Մատինեան Մարիամ
100 տ. Մելիք-Ադամեան Աշխէն
տ. Մելիք-Ազարեան Սոֆիա
տ. Մելիք-Բախտամեան Նունէ
տ. Մելիք-Բէգլարեան Իդա (նոր անդամ)
տ. Մելիք-Հայկազեան Հեղինէ
տ. Մելիք-Կարագեօզեան Մարիամ
տ. Մելիք-Մարութեան Աննա
տ. Մելիք-Մարութեան Լուսաբեր
տ. Միրզոյեան Թելիկ
տ. Միրզոյեան Նունէ
տ. Միրզոյեան Աննա
110 տ. Միրզոյեան Սոֆիա
տ. Միրիմանեան Կատարինէ
տ. Միրիմանեան Մարիամ
տ. Միրիմանեան Նատալիա
տ. Մնացականեան Փարանձեմ



տ. Մեամնիկեան Եղիսաբէթ

Յ

տ. Յակոբեան Շուշանիկ
տ. Յակոբեան Սոֆիա (նոր անդ.)
տ. Յակոբեան Նունէ (նոր անդ.)
տ. Յարութիւնեան Երանուհի
120 տ. Յարութիւնեան Մարիամ (նոր անդամ)
տ. Յարութիւնեան Նատալիա (նոր անդամ)
տ. Յովհաննիսեան Դարիա

Շ

տ. Շադինեան Վարվառէ
տ. Շահ-Նազարեան Նատալիա
տ. Շահ-Նազարեան Սոֆիա
տ. Շահ-Նազարեան Հռիփսիմէ
տ. Շահ-Մուրադեան Սոֆիա

Ո

տ. Ուլանցեան Եւգինէ

Պ

տ. Պսարեան Նունէ

Ջ

130 տ. Ջանշեան Եւգինէ

Ռ

տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Կատարինէ

Ս

տ. Սարեան Սոֆիա
տ. Սարուխանեան Եղիսաբէթ
տ. Սևանեան Աննա (նոր անդ.)
տ. Սերեբրակեան Նունէ (նոր անդ.)
տ. Սիմոնեան Նունէ
տ. Սողոմոնեան Աստղիկ
տ. Սպանդարեան Կատարինէ
140 տ. Ստեփանեան Աննա
տ. Սուլխանեան Շուշանիկ (նոր անդամ)
տ. Սունդուկեան Սոֆիա

Վ

տ. Վարդապետեան Նադեժդա
տ. Վարդպատրիկեան Օլգա
տ. Վարդազարեան Եղիսաբէթ
տ. Վարդանեան Եղիսաբէթ (նոր անդամ)
տ. Վահրամեան Եւգինէ

Տ

օր. Տէր-Աբրահամեան Մարգարիտ
տ. Տէր-Յակոբեան Սոֆիա
150 տ. Տէր-Յարութիւնեան Դարիա
տ. Տէր-Գրիգորեան-Արղութեան Սոֆիա
տ. Տէր-Դաւթեան Եղիսաբէթ
տ. Տէր-Ջանեան Սոֆիա
տ. Տէր-Դաւթեան Թեկղի (նոր անդ.)
տ. Տէր-Միքէլեան Աննա
տ. Տէր-Օհաննէսեան (նոր անդ.)
տ. Տիգրանեան Նադեժդա
տ. Տիգրանեան Նատալիա

Ց

160 տ. Ցիցիկեան Էփեմիա

Փ

տ. Փիրաղեան Իւլիա (նոր անդամ)
տ. Փոնդոյեան Կատարինէ
տ. Փրիգոնեան Մարիամ

Ք

տ. Քալանթարեան Թամար
տ. Քալանթարեան Մարիամ
տ. Քալանթար Սոֆիա
տ. Քամոյեան Եղիսաբէթ
տ. Քաթանեան Կատարինէ (ն. ա.)
170 տ. Քիշմիշեան Թամար

Օ

տ. Օթարեան Սոֆիա

Ֆ

տ. Ֆրիշբէրգ (նոր անդամ)

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ

| | 1903 թ. | 1904 թ. |
|---|---|---|
| Անձեռնմխելի դրամագլուխ . . | 10,700 ռ, | 11,300 ռ. |
| Յատուկ » . | 3,500 » | 3,500 » |
| Պահեստի » . . | 8,500 » | 8,500 » |
| Ծախսի » . | 3,015 » 26 կ. | 2,513 » 88 կ. |
| Ընդամենը | 28,715 ռ. 26 կ. | 25,813 ռ. 88 կ. |

| | | |
|---|---|---|
| Ընկերութեան ինվենտարը . . | 1050 ռ. | 1135 ռ. 05 կ. |

# ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1904 *թ. յունվարի* 1-*ից մինչև* 1905 *թ. յունվարի* 1-*ը*

| Մ Ո Ւ Տ Ք | Առանձին Ռուբ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռուբ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|
| **ա. Անդամավճարներ.** | | | | |
| *Երկու անդամներից միանուագ* | 300 | | | |
| *171 գործադիր անդամներից* | 1026 | | 1326 | |
| **բ. Նուիրատւութիւններ.** | | | | |
| *Մի անյայտ անձից «Тифл. Листокъ»-ի խմբ. միջոցով* | 25 | | | |
| *Եղբ. Միրզոյեանների և ընկ. Նաւթարդիւնաբերական ընկերակցութիւնից* | 300 | | | |
| *Հանգուցեալ Սոֆիա Սողոմոնեան Մելիքեանի նուիրած իրեղէնների վաճառքից* | 72 | 80 | 397 | 80 |
| **գ. Պարահանդէսներից, վաճառքներից եւայլն.** | | | | |
| *1903 թ. դեկտ. 22-ին ներկայացումից ապառիկ* | 12 | | | |
| *Հոկտ. 3-ին Թիֆ. ժողովարանի այգում սարքած զբօսանքից* | 684 | 24 | | |
| *Դեկտ. 19-ին Թիֆ. ժողովարանի դահլիճում տուած նուագահանդէսից* | 1569 | 95 | 2266 | 19 |
| *Ընկերութեան գումարների տոկոսը* | — | — | 916 | 61 |
| *Կարուձևի գործանոցի պատուէրներից եկամուտ* | — | — | 1058 | 05 |
| *Աշխատանքների վաճառքից* | — | — | 424 | 24 |
| *Խոհարարական իրեղէնների վաճառքից* | | | 4 | |
| Գումարն է | | | 6392 | 89 |
| **դ. Նախորդ տարուանից մնացած գոյք.** | | | | |
| *Պետական դրամանոցի խնայողական գանձարանում* | 2386 | 33 | | |
| *Առձեռն դրամ գանձապահի մօտ* | 528 | 93 | | |
| *22,800 ռ. ս. գ. տոկոսաբեր թղթեր, որ գնուած է և ընդունուած* | 22538 | 57 | 25453 | 83 |
| Ընդամենը | | | 31846 | 72 |

*Վերստուգիչ մասնաժողովի ատենապետուհի՝*
*Հեղինէ Աւթանդիլեան*

Անդամներ { Սաթ. Բարխուդարեան
Ս. Աբրահամեան

| Ե Լ Ք | Առանձին Ռուբ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռուբ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|
| **ա. Կարուձևի գործանոցի ծախսեր.** | | | | |
| *Վարպետուհիներին ռոճիկ* | 3279 | 94 | | |
| *Ծառաներին ռոճիկ* | 390 | | | |
| *Բնակարանի վարձ և ջրի փող* | 1000 | | | |
| *Կարուձևի գործ. կահ-կարասիքի և վերանորոգ.* | 128 | 92 | | |
| *Վառելիք* | 119 | 45 | | |
| *Մանր ծախք* | 88 | 36 | | |
| *Երեխաների զբօսանքների համար* | 38 | 78 | | |
| *Պատրաստելիք աշխատանքների համար նիւթեր* | 37 | 79 | | |
| *Սարքած բազարի համար նիւթեր* | 365 | 84 | | |
| *Մասնագիտական օրագրեր կարուձևի համար* | 27 | 60 | | |
| *Դեղերի* | 51 | 35 | | |
| *Բանուորուհիների օգտին հանած գումարը պատուէրների եկամուտից* | 116 | 95 | 5544 | 58 |
| **բ. Չքաւորներին նուիրատւութիւններ.** | | | | |
| *Ծննդեան և Զատկին* | 185 | | | |
| *Յունվար և դեկտ. ամիսներում Երեխաների Խնամատար Ընկերութեան* | 40 | | | |
| *Կ. Եւանգուլեանի, Ն. Փրիդոնեանի, Գ. Մութաֆեանի, Ն. Թամամշեանի և Մակարեանի անուան թոշակառուներին* | 133 | | | |
| *Բանիմի չքաւոր գերդաստաններին նպաստ* | 150 | | | |
| *Չքաւոր բանուորուհիներին զգեստ և նպաստ* | 162 | 20 | 670 | 20 |
| *Դիւանական և այլ ծախսեր* | 101 | 27 | | |
| *Տոմսակների պահելու և ապահովութեան* | 28 | 35 | 129 | 62 |
| Ընդամենը | | | 6344 | 40 |
| *Պետական խնայող. գանձարանում մնում է* *) | 1681 | 49 | | |
| *Առձեռն դրամ գանձապահի մօտ* | 832 | 39 | | |
| *Անցեալ տարուանից տոկոսաբեր թղթեր* | 22538 | 57 | | |
| *Նոր ձեռք է բերուած վկայաթուղթ պետակ. բէնտի 500 ռ. արժ.* | 449 | 87 | 25502 | 32 |
| Ընդամենը | | | 31846 | 72 |

*) *Այդ գումարի մէջ է նաև կարուձևի գործանոցի ստացած պատուէրներից բանուորուհիներին հասանելիք մասը—63 և 55 կ.*

# ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒԸ
## 1905 Թուի

| ՄՈՒՏՔ | Ռուբ. | Կ. |
|---|---|---|
| 1. Գործադիր անդամներից | 1050 | |
| 2. Միանուագ վճարող գործադիր անդամներից | 300 | |
| 3. Պարահանդէսներից, բազարներից և այլն | 2650 | |
| 4. Նուիրատուութիւններ | 400 | |
| 5. Պատուէրներից եկամուտ | 1100 | |
| 6. Աշխատանքների վաճառքից | 300 | |
| 7. Տոկոսիք Ընկերութեան գումարներից | 900 | |
| Ընդամենը | 6700 | |

| ԵԼՔ | Ռուբ. | Կ. |
|---|---|---|
| Կարուձևի դպրոցի պահպանութիւնը. | | |
| 1. Վարպետուհիներին ռոճիկ | 3380 | |
| 2. Ծառաներին ռոճիկ | 324 | |
| 3. Կահ-կարասիք և նորոգութիւն | 100 | |
| 4. Բնակարանի վարձ և ջրի փող | 1000 | |
| 5. Մանր ծախքեր | 91 | |
| 6. Վառելիք | 100 | |
| 7. Դեղեր | 60 | |
| 8. Մասնագիտական օրագիր կարուձևի համար | 27 | |
| 9. Նախապատրաստական աշխատանքների համար նիւթեր | 50 | |
| 10. Բազարի համար նիւթեր | 240 | |
| 11. Տօներին նուիրատուութիւններ | 200 | |
| 12. Թօշակառուներին » | 133 | |
| 13. Ջքաւոր բանուորուհիներին զգեստ | 150 | |
| 14. Դիւանական և այլ ծախսեր | 75 | |
| 15. Տոմսակների պահելու և ապահովացնելու | 50 | |
| 16. Երեխաների զբօսանքների համար | 50 | |
| 17. Անձեռնմխելի գումարի համար յետ դրած | 670 | |
| Ընդամենը | 6700 | |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովի՝ կայացած *1904* թ. մարտի *14*-ին։

*1904 թ. մարտի 14-ին տեղի ունեցաւ Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը 52 անդամուհու ներկայութեամբ։*

*Վարչութեան ատենապետուհի Վ. Ռոտինեանը բաց արաւ նիստը ցերեկուայ ժամը 1-ին և առաջարկեց՝ ըստ Ընկերութեան կանոնագրութեան § 35-ի, ընդհանուր ժողովի ատենապետուհի ընտրել։ Ժողովն ընտրեց Մ. Միրիմանեանին։*

*Վարչութեան քարտուղար Մ. Մելիք-Կարագեօզեանը կարդաց 1903 թ. մարտի 30-ի ընդհանուր ժողովի արձանագրութիւնը և Ընկերութեան 1903 թ. գործունէութեան հաշիւը, որոնք և հաստատուեցին ընդհանուր ժողովից։*

*Վարչութեան ատենապետուհի Վ. Ռոտինեանը անդամներին առաջարկեց յոտնկայս յարգել հանգուցեալ Ն. Թամամշեանի յիշատակը, որ եղել է Ընկերութեան վարչութեան օգտակար անդամ։ Ժողովականները ոտքի կանգնելով յարգեցին հանգուցեալ Ն. Թամամշեանի յիշատակը։*

*Կարուձևի գործանոցի կառավարչուհի Ա. Կուզանեանը կարդաց գործանոցի՝ 1902—1903 թուականների գործունէութեան հաշիւը։*

*Վերաստուգիչ մասնաժողովի անդամ Ս. Բարխուդարեանը կարդաց Ընկերութեան գումարների 1903 թ. ելևմուտքի հաշիւը և վերաստուգիչ մասնաժողովի զեկուցագիրը։*

*Ընկերութեան անդամ տ. Տիգրանեանը յայտնեց, թէ ինքը՝ անցեալ տարուայ նման, այժմ ևս դէմ է այնպիսի քիչ տոկոսին, որ մասնատրվում է բանուորուհիներին պատուէրներից ստացած եկամուտից։ Առ այդ ընդհանուր ժողովի ատենապետուհի Մ. Միրիմանեանն առաջարկեց տ. Տիգրանեանին որոշել, թէ որքան % է ցանկալի այդ նպատակի համար։*

*Տ. Տիգրանեանն ասաց թէ 30%. առ որ Ընկերութեան անդամ*



*տ. Աբրահամեանն առարկեց, թէ որովհետև բանուորուհիներն արդէն հիմա ևս ստանում են 25%, ուրեմն տարբերութիւնն ընդամենը միայն 10 ռ. է լինելու, որպիսի չնչին գումարի համար խօսել անգամ չարժի։ Ընդհանուր ժողովը վճռեց թողնել նախկին չափը։*

*Ընդհանուր ժողովի ատենապետուհի Մ. Միրիմանեանը ժողովականներին զեկուցեց, թէ Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը ցանկանում է՝ կարուձևի գործարանն ընդարձակելու նպատակով պահեստի գումարից փոխառութիւն անել 3000 ռ. Վարչութիւնը մտադիր է շինել տալ երկրորդ յարկ տ. Շադինեանի տան առաջին յարկի վրայ, Գանովսկայա փողոց, № 25, որ կը կազմէր երեք մեծ, լոյս սենեակ պատշգամով։ Վարչութիւնը մտածում է կապալով տալ այդ շինութիւնը և տանտիրուհու հետ նոտարական կարգով պայման կապել, որի զօրութեամբ վարչութիւնը Ընկերութեան հաշուի մէջ կ՚առնի վերին յարկը և դրա համար տանտէրերին 10 տարուան ընթացքում տան վարձ չի վճարել, եթէ միայն նրանք չկամենան 5 տար. ընթացքում յետ գնել։ Այնպէս որ բնակարանի վարձը վերին յարկի համար կը նստի 400 ռ. տարեկան, որ այժմեան վարձած բնակարանի հետ միասին կ՚անի 1400 ռ. տարեկան։*

*Ընկերութեան անդամ Ս. Ծալանթարեանի հարցին, թէ հապա ինչո՞ւ 1904 թ. համար բնակարանի վարձ 1150 ռ. է նշանակած, Վարչութեան գանձապահ Վ. Միլեանը պատասխանեց, թէ որովհետև նախահաշիւը կազմուած է սեպտեմբերից—յունվար։*

*Ընկերութեան անդամ տ. Աբրահամեանն առաջարկեց՝ բնակարանի պարտքը ջնջել միակերպ վճարումներով 10 տարուան ընթացքում, սակայն ընդհանուր ժողովն անյարմար գտաւ այդ։*

*Ընդհանուր ժողովի ատենապետուհի Մ. Միրիմանեանի հարցին՝ արդեօք ընդհանուր ժողովը դէմ չէ՞ թէ բնակարանի վերաբերմամբ այդպիսի կարգադրութեան և թէ այդ նպատակի համար պահեստի գումարից 3000 ռ. փոխառութեան,—ընդհանուր ժողովը պայմական վճիռ կայացրեց, այսինքն՝ եթէ չգտնուի ուրիշ յարմար բնակարան։ Իսկ Ընկերութեան անդամ տ. Տիգրանեանը այն կարծիքը յայտնեց, որ ինքը չի համակրում գոյքի համար պահեստի գումարից ծախսելուն։*

*Ընկերութեան անդամ Ս. Տէր-Գրիգորեան-Արղութեանը յայտնեց որ իր՝ Վարչութեան անդամ եղած ժամանակ շատ անգամ է զարթել ուրիշ բնակարան վարձելու հարցը, բայց չի յաջողուել*

որովհետև յարմար բնակարան չի գտնուել։ Իսկ Վարչութեան անդամ Մ. Մելիք-Կարագ'օզեանը յայտնեց, որ թէև Վարչութիւնը որոնեց և նոյնիսկ այդ մասին յայտարարեց լրագրներում, թէ կարուձևի գործարանի համար բնակարան է որոնում, բայց արդիւնք չունեցաւ և եկաւ այն եզրակացութեան, որ եղած բնակարանի վերաբերեալ կարգադրութիւնը թէ՛ աւելի յարմար և թէ աւելի ձեռնտու է Ընկերութեան։

Վերաստուգիչ մասնաժողովի անդամ Ս. Բարխուդարեանը կարդաց 1904 թ. նախահաշիւը, որ և հաստատուեց ընդհանուր ժողովից։

Ընդհանուր ժողովի ատենապետուհին յայտնեց, որ կանոնադրութեան համաձայն Վարչութեան կազմից մի երրորդը պէտք է դուրս գայ վիճակով, ուստի և հարկաւոր է ընտրել Վարչութեան երեք անդամ և երկու էլ թեկնածու, ինչպէս նաև Վերաստուգիչ մասնաժողովի երեք անդամ և երկու էլ թեկնածու։

Վիճակով Վարչութեան անդամներ ընտրուեցին՝ Մ. Մելիք-Կարագեօզեան, Վ. Միլեան, Ա. Ռոտինեան, և դրանց թեկնածուներ՝ Կ։ Լիսիցեան և Ս. Քալանթար. իսկ Վերաստուգիչ մասնաժողովի անդամներ ընտրուեցին՝ և Պ. Աւթանդիլեան, Ս. Բարխուդարեան, Ն. Դոլուխանեան, դրանց թեկնածու Մ. Միրիմանեան։

Ընդհանուր ժողովն ընտրութիւնները կատարեց 45 անդամի ներկայութեամբ, որովհետև անդամներից ոմանք գնացել էին ժողովից։

Տոմսակներով ընտրութիւնը հետևեալ արդիւնքը տուաւ.

Վարչութեան անդամներ.

| | | |
|---|---|---|
| Մ. Մելիք-Կարագեօզեան | 45 | ձայնով |
| Վ. Միլեան | 40 | » |
| Ա. Ռոտինեան | 36 | » |

Դրանց թեկնածուներ։

| | | |
|---|---|---|
| Կ. Լիսիցեան | 15 | » |
| Ե. Առաքելեան | 12 | » |



Վերաստուգիչ մասնաժողովի համար.

| | | |
|---|---|---|
| Հ. Աւթանդիլեան | 44 | » |
| Ս. Բարխուդարեան | 33 | » |
| Ս. Աբրահամեան | 17 | » |

Դրանց թեկնածուներ.

| | | |
|---|---|---|
| Մ. Միրիմանեան | 18 | » |
| Թ. Բաբանասեան | 7 | » |

Տ. տ. Առաքելեանն ու Բաստամեանը 12-ական ձայն ստանալով, Ընդհանուր ժողովը վճռեց վիճակ գցել, և վիճակն ընկաւ տ. Առաքելեանին։

Ընդհանուր ժողովի ատենապետուհի՝ Մ. Միրիմանեան

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ Մ. Մելիք-Կարագեօզեան

## ՀԱՇԻՒ ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1904 Թ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

1904 թ. Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան գործունէութիւնը կայանում էր գլխաւորապէս Կարուձևի գործանոց պահելով, որտեղ համարատուութեան տարում ուսուցանվում էր կարուձև 118 բանուորուհու՝ 5 վարպետուհու և 1 փոխ-վարպետուհու հսկողութեան տակ։

1904 թ. յունիսին Կարուձևի գործանոցի դասընթացքն աւարտեցին 12 բանուորուհի՝ վարպետուհու կոչումով։ Ցանկանալով դասընթացքն աւարտող վարպետուհիներին օգնութեան ձեռք մեկնել և նրանց միջոց տալ ինքնուրոյն կերպով աշխատելու և կարուձևի գործում աւելի ևս կատարելագործուելու, Վարչութիւնը 1904 թ. հոկտ. 12 ին բաց արաւ առանձին գործանոց, որի համար վարձեց սենեակ, որ յարաբերութիւն ունի Կարուձևի գործանոցի հետ և որ միջոց է տալիս Վարչութեան անդամներին ու կառավարչուհուն հսկել այդ գործանոցի վրայ, ուր աշխատող նորաւարտ բանուորուհիներին նիւթական օգնութիւն էր տրվում։ Այդ գործանոցում այժմս բանում է 6 վարպետուհի՝ գլխաւորութեամբ Թարխանեան վարպետուհու, որ 4 տարի առաջ աւարտել է Ընկերութեան Կարուձևի դպրոցը և ցոյց է տուել իրան որպէս կարուձևի գործին լաւ գիտակ և որպէս ճաշակով վարպետուհի։ Գործանոցի կատարած պատուէրներից աշխատանքի 65$^0/_0{}^0/_0$-ն ստանում է պատուէր կատարող վարպետուհին, մնացած 35$^0/_0{}^0/_0$ գործ է դրվում՝ գործանոցի վրայ արած ծախսերը ծածկելու և գլխաւոր վարպետուհու վարձատրութեան համար։ Փորձը ցոյց տուաւ որ գործանոցի գործերը լաւ են գնում. պատուիրողները գոհ են, գները՝ երբև նոր սկսած գործ չափաւոր էին։

Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Կարուձևի գործանոցը՝ համարատուութեան 1904 թ. պատուէրներից աշխատել է 1058 ռ. 05 կ., որից մեծ բաժանմունքի բանուորուհիներին տրուած է $^0/_0{}^0/_0$ 116 ռ. 95 կոպէկ։

Բացի նրանից որ Ընկերութեան վարչութիւնը չքաւոր աղջիկներին ձրի է ուսուցանում կարուձևի արհեստը, այլև հնար եղածին չափ օգնում է նրանց՝ տալով շորեր, ոտնամաններ, դեղեր և կարուձևի նիւթեր։ 1940 թ. այդ ձևով օգնութիւն ստացող չքաւոր վարպետուհիների թիւը եղել է 27, դրա հետ հաշուելով նաև



թոշակառուները։ Դրանից զատ վարչութիւնը տօներին դրամ է բաժանում չքաւորներին՝ իւրաքանչիւրին տալով 3 ռուբլուց ոչ-աւելի։

1904 թ. ս. Հաղորդութիւն ընդունելիս չքաւորներին տրուած է 185 ռ. Մանուկների Խնամատարութեան Ընկերութեան տրուած է յունվարին և դեկտ. (2 ռ.) 40 ռ., թոշակառուներին—133 ռ., միքանի չքաւոր գերդաստաններին—150 ռ. և չքաւոր բանուորուհիների զգեստների համար—162 ռ. 20 կ., ընդամենը 670 ռ. 20 կ.

1904 թ. Կարուձևի գործանոցում 7 թոշակառուներ կային, այն է՝ յանուն Կ. Եւանգուլեանի—Դանիէլեան, յանուն Գ. Մուսթաֆեանի—Կիւրեղեան և Խաչատրեան, որ բռնել էր ընթացաւարտ Պճիկեանի տեղը, յանուն Մ. Մակարեանի—Իշխանեան և Ուլիբէկեան և յանուն Ն. Թամամշեանի—Գրիգորեան, որ բռնել էր դուրս գնացած Խալաթեանի տեղը։

1904 թ. յօգուտ Ընկերութեան ստացուած է հետևեալ նուիրատուութիւնները. Եղբ. Միրզոյեան և ընկ. նաւթարդիւնաբերական ընկերակցութիւնից 300 ռ., «Тифл. Листокъ»-ի խմբագրութեան միջոցով «Անյայտից» 25 ռ., հանգուցեալ Ս. Ս. Մելիքեանի իրեղէնները վաճառելուց 72 ռ. 80 կ.

1904 թ. միանուագ 150 ռ. վճարող գործադիր անդամ երկու են, այն է՝ Կատարինէ Մարկոսեան և Շուշանիկ Տէր-Մարգարեան. 6 ռ. վճարող գործադիր անդամ—171 ռ., հետևապէս անցեալ տարուանից աւելացել է 2 անդամ, որ միանուագ 150 ռ. են վճարել և 11 անդամ, որոնք 6 ռուբլի են վճարում։

Վարչութեան անդամ Ա. Ռոտինեանի հիւանդութեան պատճառով վարչութեան կազմի մէջ մտաւ թեկնածու իշ. Մ. Բէհբութեանը. դասատուների կազմի մէջ է մտել փոխարէն նկարչութեան վարժուհի Ե. Կ. Նայիդենովայի Օ. Կ. Աջեմեան, իսկ հաշուապահութիւն ուսուցանող Հ. Դ. Թադէոսեանի փոխարէն տ. Յովհաննիսեան։

Վարչութիւնը իր պարտքն է համարում խորին շնորհակալութիւն յայտնել բժ. Վ. Արծրունուն, որ շարունակում է ձրի բժշկել Կարուձևի գործանոցի բանուորուհիներին, բժ. Լ. Քալանթարեանին՝ աչքացաւով հիւանդներին ձրի բժկելու համար և իշ. Ն. Բէհբութեանին, որ գծագրութիւնը ձրի է դաս աւանդում, որպէս անհրաժեշտ առարկայ կարուձևի համար։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*1. Նախորդ 1904 թ. մարտ 14-ին կազմուած ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը։*

*2. Վերստուգիչ մասնաժողովի զեկուցագիրը։*

*3. Ընկերութեան գումարների հաշիւը մինչև համարատուութեան տարին։*

*4. Հաշիւ Վարչութեան 1904 թ. գործունէութեան մասին։*

*5. Նախորդ 1904 թ. կազմուած նախահաշուի ընթերցումն ու հաստատութիւնը։*

*6. Ընտրութիւն Վարչութիւնից հերթով դուրս գնացող 3 անդամի և 3 թեկնածուի։*

*7. Ընտրութիւն Վերստուգիչ մասնաժողովի 3 անդամի և 4 թեկնածուի։*

*8. Կարուձևի գործանոցի համար սեպհական շինութեան համար գետին գնելու հարցը։*

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011999